

ՅԱԻԵԼԵԱԼ
ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ՏԻՒԻԹՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ¹

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ

ՄՈՒՏՔ

1992ին Պերճ Կարապետեանի ընդգրկուն յօդուածը լոյս տեսաւ *Հայկազեան Հայագիտական Հանդէսի* ԺԲ. հատորին մէջ² նուիրուած հայկական տիւրիթներուն³: Այդ յօդուածով գիտական շրջանառութեան մտաւ հայ պղնձագործութեան կալուածներէն մին հանդիսացող տիւրիթներու արուեստը:

Տիւրիթներ աշխատուած են Այնթապի, Պոլսոյ եւ Ուրֆայի մէջ⁴: Եթէ Պոլսոյ տիւրիթի արհեստաւորներէն ոչ-բոլորը կրնան անպայման հայ եղած ըլլալ⁵, ապա Այնթապի մէջ աշխատուած բոլոր գործերը, Ռուբէն Պարսումեանի պնդմամբ, հայ արհեստաւորներու ձեռագործն են, մանաւանդ որ առկայ նիւթերը այդ կը հաւաստեն ամբօրէն: Կան նաեւ պարսկական եւ հնդկական տիւրիթներ, որոնց ոճը սակայն, տարբեր է հայկականէն:

Կարապետեանի յօդուածը կը թուի ըլլալ առաջին համապարփակ, ամբողջական ուսումնասիրութիւնը տիւրիթներու մասին առհասարակ⁶: Կարապետեան կը նկարագրէ տիւրիթը, անոր ծննդոցը, կը հաւաստէ հնագոյն օրինակներուն ԺԸ. դարավերջին պատկանիլը, կը նկարագրէ տիւրիթի պատրաստման գործընթացը, կու տայ անոր գործածութեան վերաբերեալ անձնական յուշեր, կը մէջբերէ անոր նուիրուած երկու քերթուած ու հանելուկ մը: Յօդուածը կ'ընդգրկէ նաեւ 41 տիւրիթի նկարագրութիւն եւ 30 տիւրիթ հաշուող 11 նկար: Յօդուածին այլ իրագործում մըն է այնտեղ մէկտեղուած կնիքներու տախտակը⁷: Արդարեւ, յենելով իր «երեսնեակ մը» հաշուող հաւաքածոյին դիտարկումներուն, եւ աչքէ անցընելով շուրջ «հարիւրեակ մը» գրչամաններ⁸, Կարապետեան խմբաւորած է տիւրիթներու կնիքները, գծանկարով ներկայացուցած 19 կնիք եւ զանոնք փորձած է նաեւ ժամանակագրական կարգով դասաւորել:

Այս յօդուածով մենք որոշ յաւելումներ եւ ամբողջացումներ պիտի կատարենք տիւրիթներու նիւթին: Նաեւ՝ պիտի նկարագրենք եւ չափազրենք լիբանանահայ հաւաքորդ Սասուն Միմոնեանի երեսուներեք⁹ տիւրիթներու, Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան Անթիլիասի Թանգարանի¹⁰ եւ գեղանկարիչ Յարութիւն Թորոսեանի երեքական¹¹, Սարգիս Կիրակոսեանի երկու¹², Վրէժ Թագեանի¹³ եւ մեր¹⁴ մէկական տիւրիթները¹⁵:

Մեր արամագրութեան տակ գտնուող նիւթը կարելիութիւն տուաւ նման քայլ մը առնելու եւ ամուր հիմք կը հանդիսանայ՝ Կարապետեանի վերոյիշեալ յօդուածին վրայ կատարելու երկու տեսակի յաւելումներ:-

Ա. Նոր, ցարդ անծանօթ կնիքներու յաւելում, եւ Կարապետեանի կնիքներու տախտակին մի քանի կնիքներու վերամշակում¹⁶: Հուսկ՝ Կարապետեանի հրատարակած կնիքներու վերամշակուած աղիւսակի ներկայացում:

Բ. Նկարագրութիւն 43 'նոր' տիւրիթներու: Նկարագրութեան կցած ենք չափագրական երկու աղիւսակներ, որոնք անջատաբար կը վերաբերին գրչակալին եւ թանաքակալին:

Այս յօդուածը կը միտի նաեւ հետազօտողներու ուշադրութիւնը թեքել հայկական կենցաղային իրերու եւ կիրառական արուեստի պղնձագործութեան կալուածին եւ մղել անհատ հաւաքորդները որ իրենց նիւթերը դնեն շրջանառութեան: Մենք կը յուսանք որ այսու հայ մշակոյթի ընդարձակ պարտէզին մաս կազմող «մանր արուեստներ»-ու փոքր ածու պղնձագործութիւնը որ արժանի է գրոց յիշատակի կ'արժանանայ համապատասխան ուշադրութեան եւ անոր հանդէպ անհրաժեշտ գիտակցութիւնը կը ծաւալի: Հոսկ, մեր փայտաշած երազն է որ այս արուեստին նուիրուած հալէպահայ հաւաքորդ Պարսումեանի անաւարտ, մշակման եւ խմբագրման կարօտ համապարփակ, արհեստագիտական մանրամասնութիւններով հարուստ ուսումնասիրութիւնը ի վերջոյ լոյսին կու գայ իր հազուագիւտ ու մեծարժէք ցուցանմունքներով: Թերեւս միայն այդ պարագային՝ գրաւոր յուշարձանով մը, մշտնջենապէս, գէթ դոյզն ինչ չափով կը փրկուի Յեղասպանութեան հետեւանքով ընդհատած, Հալէպի մէջ՝ եւ թերեւս այլուր - մասամբ շարունակուած եւ այժմ գրեթէ դադրած ու յաւիտենական կորուստի դատապարտուած հայ պղնձագործութեան կալուածը:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ՏԻՒԻԹԻ

Տիւրիթը ունի երկու մաս՝ գրչակալ եւ թանաքակալ: Անոնք իրարու զօրուած են քան թէ դամուած:

Կարապետեան տիւրիթ եզրը կը գործածէ՝ ներկայացնելու ամբողջութիւնը թանաքակալին եւ գրչակալին: Նոյն իմաստով ան կը գործածէ նաեւ գրչաման բառը: Մենք կը կառչինք տիւրիթ բառի կիրառութեան, նշելու համար ամբողջութիւնը երկու մասերուն՝ գրչակալին, ուր եղէգը կը պահպանուի, եւ թանաքակալին ուր թանաքը կը պահպանուի:

Կարապետեան կը հաւաստէ որ տիւրիթի հնագոյն օրինակներ եղած են ձեռագործ եւ ոչ-ձուլածոյ: Ներկայ հաւաքածոյին բոլոր տիւրիթները ձուլածոյ են: Տիւրիթին մետաղը գրեթէ միշտ եղած է դեղնագոյն պղինձ, երբեմն կլայելուած: Կան նաեւ ոսկեջրուած¹⁷ եւ արծաթեայ օրինակներ¹⁸: Յաճախ դեղնաւուն պղինձը ժանգոտելով մթազնած է: Բացառութեամբ ծխնիին արանցքին¹⁹ ու գրչակալը թազին կապող կտորին գամերուն²⁰, այլ մետաղատեսակի չենք հանդիպիր տիւրիթին վրայ: Դիւրաբեկ բաժինները խաչն է, ծխնին, թազն ու խուփը եւ թանաքակալը իր մասերով: ասոնք առաւել ենթակայ են վնասուելու, փրթելու: Կան տիւրիթներ որոնց խաչը, կամ թանաքակալին յատակը, կամ ոստրէն, եւ ոստրէին պատուանդանը նորոգուած/փոխուած են, կամ կորսուած:

Գրչակալը երկար՝ ընդհանրապէս 18-24 սմ., ութանկիւն խողովակ մըն է, որ ունի երեք տարբեր չափերով մակերեսներ՝ 2 նեղ նիստեր (1.2-1.5 սմ.) + 2 լայն նիստեր (2.5-3.4 սմ.) + 4 թեք նիստեր (հազիւ 0.5 սմ.)²¹: Չենք հանդիպած ոչ-անկիւնաւոր, այլ խօսքով՝ կտր-ողորկ գրչակալներու: Գրչակալը հազիւ նկատելի արտաքին կոնութիւն մը ունի՝ խուփէն՝ թազին ուղղութեամբ: Պարսումեան կը հաւաստէ որ գրչակալին ներքին կոնաձեւութիւնը աւելի շեշտուած է քան արտաքինը: Ըստ իրեն, թեքութեան պատճառը այն է որ մէջը դրուած եղէգը կարելի ըլլայ հեշտութեամբ դուրս քաշել:

Գրչակալը ունի երկու կափարիչ: Մին անշարժ է գոր կոչած ենք խուփ, միւսը՝ շարժուն, գոր կոչած ենք թազ: Վերջինս ծխնիի մը միջոցաւ միացուած է գրչակալին: Ընդհանրապէս թազն ու խուփը նախշուած են²²: Յաճախ թազին

գագաթին ամրացուած է փոքր խաչանման, տափակ կտոր մը, շուրջ 1 սմ. բարձրութեամբ ու լայնքով եւ 0.3 սմ. հաստութեամբ: Հագուադէպօրէն, խուփին գագաթին ամրացուած է գնդիկ մը: Ընդհանրապէս եթէ խուփին ամրացուած է գնդիկ, ապա թագին ամրացուած խաչը ունի 1-3 ծակեր²³: Թերեւս գնդիկը յաւելեալ զարդ մըն է, որուն կը համապատասխանէ ընդհանրապէս գլխիկին խաչին ծակոտկէնութիւնը:

Կնիքը քառակուսի է, 0.6 սմ. ծաւալով²⁴: Ան կը դրոշմուէր թագին եւ թանաքակալին միջեւ եղած նեղ նիստին վրայ: Կան պարագաներ երբ տիւրթը կնքուած է երկու անգամ՝ նոյն կնիքով, միշտ նեղ նիստերուն վրայ²⁵: Կնիքները գրեթէ միշտ կ'ըլլան գրչակալին ուղղութեամբ եւ հագուադէպօրէն կը խաչաձեւեն գայն²⁶: Երբեմն կնիքները կը դրոշմուին իրարու հակադիր ուղղութեամբ:

Կը հանդիպինք թէ՛ հայերէն եւ թէ՛ արաբատառ օսմաներէն կնիքներու²⁷: Կը հանդիպինք մանաւանդ հայու անունով եւ հիճրէթի թուականով արաբատառ թուանշաններով կնիքներու: Երբեմն կնիքը կ'ունենայ 2 թուական՝ հիճրէթի արաբատառ թուականի միաւորն ու տասնաւորը եւ հայատառ քրիստոնէական թուականի միաւորն ու տասնաւորը: Բոլոր արաբատառ թուանշանները հիճրէթի տարեթիւեր կը բնորոշեն, իսկ հայերէն թուանշանները՝ քրիստոնէական: Կայ տեսակէտ, թէ հայերէն կնիքները սկիզբ առած են Պերլինի Վեհաժողովէն՝ 1878էն ետք, հաւանաբար ազգային շունչի վերելքին բերմամբ: Այս տեսակէտը չի հիմնաւորուիր, քանի որ Կարապետեանի կնիքներու տախտակի թիւ 9 հայերէն կնիքը կը կրէ հիճրէթի 1257 թուականը որ կը համապատասխանէ քրիստոնէական 1841ին:

Յատկանշական է այս հաւաքածոյին թիւ 43 տիւրթը, որ ունի երկու տարբեր կնիք՝ իբեւ ստորագրութիւնն երկու 'տարբեր' արհեստանոցներու: Սա հագուադիւտ պարագայ մըն է, եւ թերեւս կը համապատասխանէ արհեստանոցի անցումային շրջանի այն հանգրուանին երբ արհեստանոցին տնօրինումը կը փոխանցուի մէկէն միւսին եւ կը հանդիսանայ իւրօրինակ յանձանձում մը: Այդ կնիքները կը համապատասխանեն մեր աղիւսակի թիւ 10բ եւ 12բ կնիքներուն: Այս իրողութիւնը անտեղիտալի ապացոյց է տուեալ արհեստանոցի սերնդափոխութեան: Այս տարբեր կնիքներու գոյակցութիւնը երաշխիք է նաեւ արհեստանոցի շարունակականութեան:

Ըստ Պարսումեանի, Կարապետեանի աղիւսակի թիւ 11 կնիքը (մեր աղիւսակի 11ա եւ 9ա թիւերը) (Յակոբ 1281) եւ նոյն աղիւսակի թիւ 9 կնիքը (Յակոբ 1257)²⁸ նոյն արհեստանոցին կը պատկանին: Կարապետեան նոյնը կը հաւաստէ²⁹: Դեռ աւելին, Պարսումեան կը հաւաստէ որ վերոյիշեալ Յակոբը եւ իր արհեստանոցը ունեցած են երեք տարբեր կնիքներ: Ասոր պատճառը, ըստ Պարսումեանի, այդ արհեստանոցին շատ արտադրելն է. մանաւանդ որ գաւակներն ալ շարունակած են նոյն գործը, պահպանելով արհեստանոցին եւ իրենց հօր անունը, բայց փոխած են կնիքին թուականը:

Մեզի անորոշ կը մնան կնիքներուն պետական կամ համաքարական ճանաչման եւ օրինականացման ընթացակարգն ու այլ առնչակից տուեալներ:

Թանաքակալ/Կաղամարը³⁰ միշտ կը զօղուէր գրչակալին կողին, եւ ընդհանրապէս՝ թագին բացուող կողմին: Կան տիւրթներ որոնց թանաքակալը դրուած է հակառակ եւ գլխիվայր ուղղութեամբ: Երբեմն նորոգման հետեւանքով թանաքակալին ոստրէն դրուած է հակառակ ուղղութեամբ: Ըստ Պարսումեանի

նի, Թանաքակալը կրնար հակառակ կողմ դրուել՝ եթէ պատուիրատուն ձախլիկ է: Թանաքակալը քառակուսի տուփիկ մըն է, որուն գրչակալին լայն նիստին զօդուած մակերեսը հարթ է ամբողջութեամբ՝ ի տարբերութիւն միւս երեք ուռուցիկ մակերեսներուն: Բոլոր Թանաքակալները ունին ուռուցիկութիւն, բայց համաչափ այս ուռուցիկութիւնը միօրինակ չէ. կան Թանաքակալներ որոնք աւելի ուռուցիկ են քան ուրիշներ: Կից աղիւսակը կը նշէ նաեւ տարբերութիւններ՝ Թանաքակալներու բարձրութեան եւ լայնքի առումով:

Թանաքակալին ոստրէներուն ուղղութիւնը նաեւ կը ճշդուէր ըստ սեփականատիրոջ ձախ- կամ ալիկութեան:

Անշուշտ որ գործածութեան պատճառով Թանաքակալը աւելի ենթակայ էր վնասուելու՝ մանաւանդ որ անոր պատերուն հաստութիւնը նուազ է քան գրչակալինը. տիւրիթին գլխաւոր մարմնին ազուցուած բաժին մը ըլլալով, Թանաքակալը ենթակայ է անջատման: Հետեւաբար նորոգման պարագաներ կրնային յառաջանալ, որոնց պատճառով ալ մեզի հասած տիւրիթներուն Թանաքակալն ու գրչակալը կրնան անպայման նոյն արտադրութիւնը չըլլալ: Կան տիւրիթներ, որոնց ոստրէն ու համապատասխան պատուանդանը չկան կամ ալ նորոգուած են ոչ-հարագատօրէն, բնօրինակին համապատասխան:

Նախշեր

Տիւրիթին արտադրութիւնը պէտք է անջատել զայն նախշելու գործողութենէն. ասոնք երկու տարբեր արհեստներ են: Նախշողները կը կոչուէին գալեմքեարներ, որոնք հաւանաբար ոչ միայն տիւրիթներ, այլեւ ուրիշ կիրառական իրեր կը նախշէին, ինչպէս քլթախոտի, ծխախոտի տուփ, հայելի եւն.: Այս հաւաքածոյին մէջ կը հանդիպինք մէկ արձանագրութեան ուր նշուած է ծաղկող-գալեմքեարին անունը³¹: Ոչ-բոլոր նախշերը հարագատ եւ սկզբնական գործեր են: Տեսակէտ կայ թէ զբօսաշրջիկներու աւելի գրաւիչ դարձնելու համար տիւրիթներու նախշերէն շատեր կրնան յետագային կատարուած ըլլալ: Սակայն, հաւանական է որ անոնցմէ ոմանք կնիքին հետ նախշուած ու կնքուած ըլլան:

Գրչակալ.- Գրեթէ միշտ գրչակալին թեք նիստերը նախշուած են՝ այլքածեւ, հայերէն պարոյկ-հարցման նշանի նմանող զարդի կրկնուող, միօրինակ շարքով մը, որ յաճախ կը բարձրանայ մինչեւ թագն ու խուփը՝ համապատասխան ուղիով: Ընդհանրապէս թեք նիստերու նախշերը բոլոր տիւրիթներուն պարագային կրկնուած են: Ներկայ հաւաքածոյին միայն թիւ 5, 26, 29 եւ 31 տիւրիթներու թեք նիստերը նախշուած չեն:

Թագը/խուփը ընդհանրապէս նախշուած են: Անոնց լայն հարթակներուն վրայ ընդհանրապէս նախշուած է եռատերեւ նախշ մը, որուն կեդրոնի տերեւը երբեմն կ'երկարի գրչակալին համապատասխան կողմը: Այս նախշը ընդհանրապէս կը կրկնուի գրեթէ բոլոր տիւրիթներուն պարագային: Պարսումեան այն շուշանի, կամ տերեւի կը նմանցնէ: Ներկայ հաւաքածոյին մէջ կայ միակ տիւրիթ մը՝ թիւ 43 որուն թագին ու խուփին նախշը հիմնապէս կը տարբերի միւսներէն երկու առումով. անիկա սրածայր գործիքով լոկ նկարագրուած նախշ մը չէ, այլ փորագրութիւն է, իսկ զարդանախշը տարբեր է միւսներէն:

Թանաքակալ.- Վերին եւ ստորին վիզի բաժինները նախշուած են թեք գիծերով, մինչ միջանկեալ ուռուցիկ անկիւնային երեսները տերեւի կամ ցորենի հասկի նմանութեամբ նախշեր ունին: Խուփը ոստրէաձեւ է - որուն համար ալ մենք զայն կ'անուանենք ոստրէ - եւ իր պատուանդանին ամրացուած է դեղին

կամ կարմիր պղնձաթելով: Ոստրէն մէջի կողմէն ունի կլոր շրթունք մը՝ ոստրէի պատուանդանին կլոր բացուածքին չափով, որպէս ամրացման միջոց: Ոստրէն եւս միօրինակ չէ թէ՛ իր ձևերն եւ թէ՛ իր վրան եղած գիծերուն առումով. կան 8 եւ 10 դժանի ոստրէներ:

Արձանագրութիւններ

Տիւրիթներու վրայ յաճախակիօրէն կը հանդիպինք թուականներու, որոնք պէտք չէ ընկալել իբրեւ տիւրիթի արտադրման թուական: Տիւրիթի գնումէն միառժամանակ ետք կրնային անոր վրայ փորագրուիլ թուական ու անուն: Երբեմն այդ արձանագրութիւններուն մէջ կը հանդիպինք նուիրառուի ծննդեան թուականին որ կրնայ նախորդել կնիքի թուականը: Դեռ աւելին. եթէ նկատի առնենք որ ամէնամեայ կնիքներ չեն եղած, հետեւաբար նոյն կնիքով արտադրուած են ոչ միայն տուեալ տարուան ընթացքին այլ այնուհետեւ եւս: Հնարաւոր պէտք է նկատել նաեւ որ տիւրիթ կրնայ տէր փոխել եւ նոր տէրը կրնայ ժամանակակից թուականը դնել-աւելցնել: Հետեւաբար՝ որեւէ տիւրիթ իր վրայ կրած կնիքի թուականին կամ անկէ ետքի արտադրութիւն է անպայման:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԻՒԹՆԵՐՈՒ

Այս հաւաքածոյին մաս կը կազմեն միայն այն տիւրիթները, որոնք հայկական կնիք, կամ հայերէն արձանագրութիւն ունին³²: Ձանոնք խմբաւորած ենք ըստ վարպետի անունի եւ սեփականութեան, եւ ոչ՝ ըստ ժամանակագրութեան: Նկարագրութեան մէջ մասամբ զանց կ'ընենք քննարկումը տուեալ տիւրիթի բոլոր մասերու իսկութեան կամ յետագայ յաւելումի մը արդիւնք ըլլալուն: Յօդուածին վերջաւորութեան տուած ենք երկու աղիւսակներ, ուր ամփոփած ենք այս հաւաքածոյին տիւրիթներուն կշիռքը, չափերը, կնիքներուն համապատասխանումը Կարապետեանի կնիքներու աղիւսակին եւ այլ մանրամասնութիւններ: Յօդուածին վերջաւորութեան տուած ենք նաեւ կնիքներու վերամշակուած աղիւսակը³³:

- 1 Ունի մէկ կնիք, նման՝ 16աին: Կնիքը փակագիր ԱՏՈՒՐ, արաբ. 97 եւ հայ. 80 թուանշաններն ունի: Խաչ ունի: Թեք նիստերը նախշուած են: Թանաքակալին վիզը ուղղահայեաց է, նախշ կայ միայն վիզին վրայ: Ոստրէն դէպի վեր կը բացուի:
- 2 Ունի մէկ կնիք, նման՝ 16աին: Կնիքը փակագիր ԱՏՈՒՐ, արաբ. 97 եւ հայ. 80 թուանշաններն ունի: Եռածակ խաչ ունի եւ պոչիկ: Թեք եւ լայն նիստերը նախշուած են՝ Կարապետեանի յօդուածի էջ 89ի վերի նկարին նմանութեամբ: Թանաքակալին վիզը ուղղահայեաց չէ: Նախշուած են փորիկն ու անկիւնային երեսները: Ոստրէն դէպի վեր կը բացուի:
- 3 Ունի մէկ կնիք, նման՝ 16աին: Կնիքը փակագիր ԱՏՈՒՐ, արաբ. 97 եւ հայ. 80 թուանշաններն ունի: Խաչ ունի: Միայն թեք նիստերը նախշուած են: Թանաքակալին վիզը ուղղահայեաց չէ: Նախշուած են անկիւնային երեսները: Ոստրէն դէպի վար կը բացուի:
- 4 Ունի երկու նոյնանման կնիք: Կնիքը փակագիր ԱՏՈՒՐ է եւ մօտ՝ 16աին, սակայն ի տարբերութիւն անոր «Տ»ը միւս տառերուն հասակին է եւ նոյն բարձրութեան վրայ, մինչ 16աի կնիքին մէջ «Տ»ը աւելի բարձր է «ԱՐ»էն: Այս կնիքին այլ տարբերութիւն մըն է այն որ «Ա»ին պոչիկը դրուած է աւելի վերեւ: Այս՝ ուրիշ՝ կնիքը ունի նաեւ այլ շեղում մը՝ թուական չ'երեւիր կամ ընդհանրապէս չկայ՝ ի տարբերութիւն 16աի կնիքին, ուր կայ արաբերէն 97 եւ հայերէն 80 թուականը: Կրնանք հետեւցնել, որ գործ ունինք այլ կնիքի մը հետ, զոր կոչած ենք 16(1): Խաչ ունի: Միայն թեք նիստերը նախշուած են: Թանաքակալին վիզը՝ ուղղահայեաց է:

- Վիզերն ու անկիւնային երեսները, առաւել փորկը նախշեր ունին: Ոստրէն դէպի վար կը բացուի:
- 5 Ունի երկու նոյնանման կնիք, նման՝ այս հաւաքածոյի թիւ 4 տիւրիթի կնիքին եւ հետեւաբար՝ 16(1)ին: Ունի յետին: Այս տիւրիթը նախշ չունի: Նեղ նիստին վրան կայ արաբերէն «1316» տարեթիւը, որ կը համապատասխանէ 1898ի: Թանաքակալին վիզը ուղղահայեաց չէ: Ոստրէն դէպի վար կը բացուի:
- 6 Ունի երկու նոյնանման կնիք, նման՝ այս հաւաքածոյի թիւ 4 եւ 5 տիւրիթներու կնիքին, հետեւաբար՝ 16(1)ին, սակայն, ի տարբերութիւն անոնց «Ո»ն կ'երեւի եւ անոր նման՝ թուականը չ'երեւիր կամ չկայ: «Տ»ը «ԱՐ»ի բարձրութեան վրայ է՝ բաղդատուող կնիքին նման: Ունի յետին: Թեք նիստերը նախշուած են: Թանաքակալին վիզը ուղղահայեաց է, վիզերն ու թեքութիւնները նախշուած են, փորկները՝ նոյնպէս: Ոստրէն չկայ:
- 7 Ունի մէկ կնիք, նման՝ այս հաւաքածոյի թիւ 4, 5 եւ 6 տիւրիթներու կնիքին: Ունի չկայ: Նախշուած են միայն թեք նիստերը: Թանաքակալին վիզը ուղղահայեաց է: Վիզերը նախշուած են, անկիւնային երեսները՝ նոյնպէս: Ոստրէն եւ պատուանդանը չկան:
- 8 Ունի երկու նոյնանման կնիք, նման՝ այս հաւաքածոյի թիւ 4, 5, 6 եւ 7 տիւրիթներու կնիքին եւ հետեւաբար՝ աղիւսակի 16(1)ին: «Ո»ն կ'երեւի: Ունի յետին: Մքանչելիօրէն նախշուած է, հաւանաբար՝ պարսկական նախշերով: Լայն նիստերուն վրայ երկուքական մարդակերպեր կան: Թանաքակալին վիզը ուղղահայեաց է, բոլոր կողմերէն նախշուած է (բացի թանաքակալի յատակէն): Ոստրէն դէպի վար կը բացուի: Այս հաւաքածոյի թիւ 4, 5, 6, 7 եւ 8 տիւրիթներու կնիքներու նմանութենէն մեկնելով կրնանք եզրակացնել որ դործ ունինք Կարապետանի աղիւսակին մէջ չգտնուող, նոր կամ ուրիշ կնիքի մը հետ: Այս կնիքին տուած ենք յօդուածի վերջաւորութեան գտնուող աղիւսակի 16(1) թիւը:
- 9 Ունի մէկ կնիք, նման՝ 15աին: Կնիքը փակագիր ԱՏՈՒԲ եւ արաբ. 1286 թուանշանն ունի: Ունի յետին: Բացի թանաքակալի յատակէն բոլոր կողմերը նախշուած են: Թուանշանի հարիւրերորդականը յատակ չէ, բայց կ'ենթադրենք որ 2 ըլլայ: Մեկնելով այս տիւրիթի կնիքէն անհրաժեշտ է կատարել ուղղում մը՝ 15ա կնիքին վերաբերեալ: Կարապետեանի համապատասխան կնիքը կը կրէ հիճրէթի 1486 թուականը որ քրիստոնէական տակաւին չեղած թուական մըն է: Ան պէտք է ըլլայ 1286, որ կը համապատասխանէ 1869ին: Այս վերամշակուած տիւրիթին տուած ենք 15բ թիւը: Թեք նիստերէն բացի միւս կողմերու նախշերը կոշտ են եւ շատ հաւանաբար՝ յետագայի յաւելուածներ, իսկ երկնահայեաց նեղ նիստին գրութիւնը՝ «ամընթ./ամիմաստ³⁴ ՕՂԼՈՒ 1864» կեղծ կը հնչէ, որովհետեւ կնիքին թուականը կը հաւասարի 1869ին, եւ չի համապատասխաներ իր վրան փորագրուած 1864 տարեթիւին: Թանաքակալը հակառակ փակցուած է: Ոստրէն դէպի վար կը բացուի:
- 10 Ունի երկու նոյնանման կնիք, նման՝ 10աին: Կնիքը փակագիր արաբատառ օսմ. ԱԿՈԲ ՈՒՍՍԱ եւ արաբ. 68 թուանշանն ունի: Թագը իր բնօրինակը չէ: Ունի երեք թեւ ունի մէկական ծակով: Միայն թեք նիստերը նախշուած են: Թանաքակալին վիզը ուղղահայեաց չէ, նախշուած են փորկն ու վիզը: Ոստրէն դէպի վար կը բացուի:
- 11 Ունի մէկ կնիք, նման՝ 10աին: Կնիքը փակագիր արաբատառ օսմ. ԱԿՈԲ ՈՒՍՍԱ եւ արաբ. 68 թուանշանն ունի: Ունի երեք ծակով եւ՝ պոչիկ: Գեղեցիկօրէն նախշուած են թեք նիստերը եւ երկու լայն նիստերը: Այս կնիքի արաբ ալէֆ եւ ուսառ գիրերը շատ աւելի մեծ են մնացեալ տառերէն, իսկ թուանշանը շատ աւելի փոքր է: Այս վերամշակուած կնիքին տուած ենք 10բ թիւը: Թանաքակալին վիզը ուղղահայեաց չէ. նախշուած է: Ոստրէն դէպի վար կը բացուի:

- 12 Ունի երկու նոյնանման կնիք: Կնիքները շատ յստակ են եւ կրնանք զանոնք հիմք գործածել: Անոնք կը նմանին 10աին, սակայն ի տարբերութիւն անոր, չունին արաբերէն ուսում գիրը: չունին նաեւ թուականները, իսկ քէ գիրին կէտերը ուղղահայեաց շարք կը կազմեն Կէ գիրի կէտին հետ, մինչ բնօրինակի երեք կէտերը փոքրիկ եռանկիւն մը կը գոյացնեն: Կրնանք վստահօրէն ըսել որ գործ ունինք ուրիշ կնիքի մը հետ, մանաւանդ որ այս կնիքը չունի արաբերէն ուսում գիրը, չունի նաեւ թուականները, որոնց բացակայութիւնը մուրճի հարուածի արդիւնք չէ: Այս կնիքին տուած ենք 10(2) թիւը: Խաչ չունի: Միայն թեք նիստերը նախշուած են: Թանաքակալին վիզը ուղղահայեաց է, միայն վիզը նախշուած է եւ՝ անկիւնային երեսները:
- 13 Ունի երկու նոյնանման կնիք, նման՝ 10աին, բայց տարբեր են անկէ, որովհետեւ կը տարբերին անոր գիրի տեսակէն. կարծէք ոչ-վարպետի գիր ըլլար: Կարեւոր այլ տարբերութիւն մըն է այն, որ թիւը աւելի արաբերէն 78ի կը նմանի քան 68ի: Այս կնիքը կը տարբերի նաեւ այս հաւաքածոյի թիւ 12ի կնիքէն, անով որ ուսում ունի, բայց փոխանակ երեք կէտերու ուղղահայեաց գիրքին, այստեղ այդ կէտերը հորիզոնական են: Կրնանք վստահօրէն ըսել որ գործ ունինք ուրիշ կնիքի մը հետ: Այս կնիքին տուած ենք 10(1) թիւը: Խաչը չկայ: Թեք նիստերն ու թանաքակալին վիզերը եւ կողմնակի անկիւնները նախշուած են: Թանաքակալին վիզը ուղղահայեաց է: Ուտրէն, որ իր բնօրինակը չէ, դէպի վար կը բացուի:
- 14 Ունի մէկ կնիք՝ տարբեր ուղղութեամբ: Կնիքը նման է 12աին: Կնիքը փակագիր ՅԱԿՈՒԲ եւ արաբ. 1281 թուանշանն ունի: Թագին խաչը կեղրոնական ծակ մը ունի: Թեք նիստերը նախշուած են, նաեւ՝ միայն կռնակի լայն նիստը, ուր զարդանախշ մը կայ: Թանաքակալին վիզը ուղղահայեաց չէ: Նախշեր կան վիզին եւ անկիւնային երեսներուն վրան: Ուտրէն, որ իր բնօրինակը չէ, դէպի վար կը բացուի:
- 15 Ունի մէկ կնիք, նման՝ 12աին: Կնիքը փակագիր ՅԱԿՈՒԲ եւ արաբ. 1281 թուանշանն ունի: Խաչ չունի: Գեղազարդուած է եւ բոլոր կողմերը նախշուած են, բացի թանաքակալին յատակէն: Նախշերը բուսական են: Երկնահայեաց նեղ նիստին գլխագիր փորագրուած է «ՄԸՂՏԸՂՍԸ ՄԸԿՐՏԻՉԻՆ ՕԳԼՈՒ ԳԵՈՐԳ»: Իսկ այս փորագրութեան ճիշդ կռնակին, յետագային փորագրուած է արաբերէն, հիճրէթի 1283 տարեթիւը, որ կը համապատասխանէ 1866ին: Լայն նիստերուն վրայ շատ հաւանաբար յետագային, ոմն յարաբերաբար նուրբ, բուսական նախշազարդում կատարած է: Թանաքակալին վիզը ուղղահայեաց չէ: Ուտրէն դէպի վար կը բացուի:
- 16 Ունի մէկ կնիք, նման՝ 12աին: Կնիքը փակագիր ՅԱԿՈՒԲ եւ արաբ. 1281 թուանշանն ունի: Այս տիւրթի չափերուն շատ պէտք չէ վստահիլ, որովհետեւ շատ վնասուած է: Սակայն կնիքը յստակ է եւ գեղեցկօրէն պահպանուած: Խաչ ունի: Միայն թեք նիստերը նախշուած են: Թանաքակալը նոյնպէս վնասուած է եւ պակասաւոր: Այս եւ նախորդ՝ թիւ 14, 15 եւ յաջորդ՝ 18 տիւրթներու նոյնանման կնիքներէն մեկնելով պէտք է Կարապետեանի աղիւսակի 12րդ կնիքին թուականին դիրքը փոխել. 12ր տանիլ աջ, իսկ 81ը՝ ձախ անկիւն: Այս վերամշակուած կնիքին տուած ենք 12բ թիւը:
- 17 Ունի մէկ կնիք, որուն թուականը չ'երեւիր, բայց նման է 12աին: Կնիքը փակագիր ՅԱԿՈՒԲ եւ արաբ. 1281 թուանշանն ունի: Խաչ ունի, կեղրոնական մեծ ծակով եւ երկու կողմնակի ծակերով: Նեղ երկնահայեաց նիստին փորագրուած է. «ԿԱՐԱՊԵՏ 1869»: Բացի թանաքակալին յատակէն բոլոր կողմերը ունին բուսական նախշեր: Թանաքակալին վիզը ուղղահայեաց է: Ուտրէն դէպի վար կը բացուի:
- 18 Ունի մէկ կնիք, նման՝ 12աին: Կնիքը փակագիր ՅԱԿՈՒԲ եւ արաբ. 1281 թուանշանն ունի: Խաչի փոխարէն ունի մէկ ծակով գլխիկ մը՝ թերեւս յետագային

- աւեցողաճ: Նախշուած են թեք նիստերը, թագն ու խուփը: Թանաքակալին վիզը ուղղահայեաց չէ, նախշուած են վիզն ու անկիւնային երեսները: Ոստրէն դէպի վեր կը բացուի: Երկնահայեաց նեղ նիստին փորագրուած է “ՍԱԲՕՆՈՒՆ ՕՂԱՈՒ ԱՐԹԻՆ [tu arapertin un arapertin] 1282”:
- 19 Ունի մէկ կնիք, նման՝ 9աին, ուր սակայն, Կարապետեան թուականը չէ դրած, թէեւ ծանօթագրութեան մէջ դրած է 1257 թուականը, որ կը համապատասխանէ 1841ին³⁵, հետեւաբար զայն ուղղած ենք՝ իբրեւ 9բ: Կնիքը փակագիր ՅԱԿՈՒԲ եւ արաբ. 1257 թուանշանն ունի: Խաչ ունի, մէկ կեդրոնական ծակով: Միայն թեք նիստերը նախշուած են: Լայն նիստին վրայ Պարսումեան սեւ մելանով գրած է՝ «Գործ Պօչկէզէնեան Յակոբճանի. Այն/թապ 1257=1840-41»³⁶: Թանաքակալին վիզը ուղղահայեաց չէ: Նախշերը միայն վիզին եւ անկիւնային երեսներուն վրան են: Ոստրէն դէպի վար կը բացուի:
- 20 Ունի երկու նոյնանման կնիք, նման՝ 11աին: Կնիքը փակագիր ՅԱԿՈՒԲ եւ արաբ. 1281 թուանշանն ունի: Այս գոյգ կնիքներուն տուեալներէն մեկնելով կ’առաջարկենք 11աի թուականին դիրքը փոխել: առաջին երկու թուանշանները՝ 12 տանիլ ձախ ծայր, իսկ միւս երկուքը՝ 81՝ աջ ծայր: Կ’առաջարկենք նաեւ Կարապետեանի դժագրութեան կնիքին՝ Վ՛ը բարձրացնել: Վերամշակուած այս կնիքին տուած ենք 11բ թիւը: Խաչ ունի: Լայն նիստերը նախշուած են: Առաջին լայն նիստին վրայ կը տեսնենք երկու կիսանդրի, երկրորդ լայն նիստին վրայ՝ երեք կիսանդրի: Կան նաեւ երկրաչափական նախշեր: Թանաքակալին վիզը ուղղահայեաց է: Թանաքակալը ամբողջութեամբ նախշագարդ է: Ոստրէն դէպի վար կը բացուի:
- 21 Ունի երկու նոյնանման կնիք, նման՝ 13աին: Կնիքը փակագիր ՍԱՐԳԻՍ եւ հայ. 81 թուանշանն ունի: Խաչը չկայ: Նախշագարդ են բոլոր կողմերը, բացի թանաքակալին յատակէն: Լայն նիստերուն վրայ կը հանդիպինք երկու վարագանման կենդանիներու: Այս գոյգ կենդանիներուն միջեւ կայ փորագրեալ արաբերէն բառ մը: Նախշերը շատ հաւանաբար յետագայի դործ են: Թանաքակալին վիզը ուղղահայեաց է: Թանաքակալի բոլոր կողմերը նախշագարդ են: Ոստրէն դէպի վար կը բացուի: Մեկնելով այս եւ յաջորդ թիւ 22 ու 23 տիւրիթներու կնիքէն, կ’առաջարկենք 81 թուանշանին դիրքը փոխել: 8բ տանիլ աջ, իսկ 1բ՝ ձախ ծայր: Վերամշակուած այս կնիքին տուած ենք 13բ թիւը:
- 22 Ունի մէկ կնիք, նման՝ 13աին: Կնիքը փակագիր ՍԱՐԳԻՍ եւ հայ. 81 թուանշանն ունի: Խաչ ունի: Միայն թեք նիստերը, թագն ու խուփը նախշուած են: Թանաքակալին վիզը ուղղահայեաց է: Վիզն ու անկիւնային երեսները նախշուած են: Ոստրէն դէպի վեր կը բացուի:
- 23 Ունի մէկ կնիք, նման՝ 13աին: Կնիքը փակագիր ՍԱՐԳԻՍ եւ հայ. 81 թուանշանն ունի: Խաչ ունի: Թեք նիստերը, թագն ու խուփը նախշուած են: Թանաքակալին վիզը ուղղահայեաց չէ: Վիզն ու անկիւնային երեսները նախշուած են: Ոստրէն դէպի վար կը բացուի:
- 24 Ունի երկու նոյնանման կնիք, նման՝ 17աին: Կնիքը փակագիր ԲԵՋԱՆ եւ արաբ. 87 թուանշանն ունի: Կնիքը թէեւ մաշած է, բայց յստակօրէն կ’երեւին ‘Ջ’ն եւ թուականը՝ արաբ. 87: Թէեւ Կարապետեան թուականը 86 դրած է³⁷, բայց այստեղ կնիքը յստակօրէն 87 է: Վերամշակուած այս կնիքին տուած ենք 17բ թիւը: Միայն թեք նիստերը նախշուած են: Գրչակալին թագը իր բնօրինակը չէ: Թանաքակալին վիզը ուղղահայեաց է եւ նախշուած: Ոստրէն դէպի վար կը բացուի:
- 25 Ունի երկու նոյնանման կնիք, նման՝ 8աին: Կնիքը կրճատագիր ՍԱՐ[ԳԻՍ] եւ արաբ. 1220 թուանշանն ունի: Խաչ ունի: Միայն թեք նիստերը նախշուած են: Թանաքակալին վիզը ուղղահայեաց չէ: Միայն վիզը նախշուած է: Ոստրէն դէպի վար կը բացուի:

- 26 Ունի մէկ կնիք, տարբեր ուղղութեամբ դրոշմուած: Կնիքը նման է Ցախն: Կնիքը կրճատագիր ՍԱՐ[ԳԻՍ] եւ արաբ․ 1220 թուանշանն ունի: Խաչ ունի: Տիւրթը ոչ մէկ նախշ ունի: Թանաքակալին վիզը ուղղահայեաց չէ: Ոստրէն եւ պատուանդանը չկան:
- 27 Ունի երկու նոյնանման կնիք, երկուքն ալ մաշած, բայց մին մօտ է Ցախն: Կնիքը փակագիր ՆՈՒՊԱՐ կը թուի ըլլալ: Ի տարբերութիւն Ցախն, որ զարնուած է թանաքակալին յատակը, այստեղ երկու կնիքները զարնուած են իրենց սովորական տեղը: Խաչ ունի: Միայն թեք նիստերը նախշուած են: Թանաքակալին վիզը ուղղահայեաց է, եւ միակ նախշուածը: Ոստրէն եւ պատուանդանը չկան:
- 28 Ունի երկու նոյնանման կնիք, նման՝ Ցախն: Կնիքը կրճատագիր ԱՐԹ[ՈՒԴ]ն ունի: Խաչ ունի: Միայն թեք նիստերը նախշուած են: Թանաքակալին վիզը ուղղահայեաց չէ: Ոստրէն դէպի վեր կը բացուի: Մեկնելով այս կնիքէն կ'առաջարկենք Թ եւ Ն գիրերուն միջեւ դնել կրճատման նշան հանդիսացող հորիզոնական գծիկը: Վերամշակուած այս կնիքին տուած ենք ճբ թիւը:
- 29 Ունի մէկ կնիք, նման՝ 18աին: Կնիքը ամբողջագիր ԵԱԿՈԲն ունի: Մեկնելով այս եւ 18աի կնիքներու տարբերութենէն կ'առաջարկենք բարեփոխել Կարապետեանի թիւ 18ա կնիքի գծանկարը եւ ԵԱԿՈԲի Ոն դնել առաջին տողի ԵԱ եւ երկրորդ տողի ԿԲի ճիշդ մէջտեղ: Վերամշակուած այս կնիքին տուած ենք 18բ թիւը: Խաչ ունի: Տիւրթը ոչ մէկ նախշ ունի: Երկնահայեաց նեղ նիստին փորագրուած է «ՀԱՐԻՉ 1905»: Թանաքակալին վիզը ուղղահայեաց է: Ոստրէն դէպի վար կը բացուի:
- 30 Ունի երկու ՏԱՐԲԵՐ կնիք: Առաջին կնիքով, երկնահայեաց նեղ նիստին, արաբատառ տրուած է անունը՝ Ատուր Պոչկէզէն, երկրորդ կնիքով՝ վայրը՝ դարձեալ արաբատառ՝ Այնթապ: Աստուք ՆՈՐԱՅԱՅՏ ԿՆԻՔՆԵՐ են: Առաջին կնիքը չկայ Կարապետեանի աղիւսակին մէջ, եւ ընդհանրապէս Կարապետեան չի յիշատակեր Ատուր Պոչկէզէն մը, թէեւ ան կը յիշատակէ Ակոբճան Պոչկէզէնեան մը³⁸: Յատկանշական է նաեւ որ առաջին տիւրթն է սա որ կը յիշատակէ արհեստանոցին վայրը: Այս տիւրթը բացառիկ արժէք կը ներկայացնէ, որովհետեւ առաջինն է ուր կը հանդիպինք ՆՈՐ ԵՐԵՔ կնիքներու, ներառեալ՝ առաջին անգամ է որ կը հանդիպինք արհեստանոցին վայրը արձանագրող կնիքի: Այսկնիքներուն տուած ենք Ատուր՝ 20(1), Պոչկէզէն՝ 20(2), եւ Այնթապ՝ 20(3) թիւերը: Պարսումեան յաւանկեցաւ որ ինք եւս ունի նման կնիքագրողով տիւրթ մը: Խաչ ունի: Միայն թեք նիստերը նախշուած են: Թանաքակալին վիզը ուղղահայեաց է եւ նախշուած: Ոստրէն դէպի վար կը բացուի:
- 31 Կնիք չունի: Խաչը կոտորած է: Տիւրթին վրայ ոչ մէկ նախշ կայ: Բայց հայերէն արձանագրութիւն ունի: Նեղ երկնահայեաց նիստին փորագրուած է «ՊԻԱԳՐԻՍ»:
- 32 Կնիք չունի: Միայն թագն ու խուփը նախշուած են: Նեղ երկնահայեաց նիստին հայերէն փորագրուած է «ՔԻԾՈ:ՄՆԵՐՍԵՍ» [Քրիստոսի ծառայ Սահտեսի Ներսէս] փակագիրն ու արաբատառ օսմաներէն «Միտսի Ներսէս 1265», որ կը համապատասխանէ 1849ին: Ասիկա հաւաքածոյին միակ արժանիքայ տիւրթն է եւ իր ոճով շեշտակիորէն կը տարբերի հայկական պղնձեայ տիւրթներէն. մանաւանդ թանաքակալին կառուցային ու ոճական հիմնական տարբերութիւնները կը թելադրեն որ ուրիշ՝ շատ հաւանաբար ոչ-հայկական արհեստանոցի կամ դպրոցի արտագրութիւն մըն է:
- 33 Ունի մէկ կնիք՝ տարբեր ուղղութեամբ: Կնիքը կը նմանի Ցախն: Կնիքը կրճատագիր ԻՇԽ[ԱՆ]ն ունի: Ամբողջութեամբ եւ լրիւ նախշուած է, նոյնիսկ թանաքակալին յատակը: Խաչ ունի: Լայն նիստերուն փորագրուած են երկու թռչնագլի, երկու կենդանակերպ, կռնակը՝ աղուէս, ծաղիկ, փիղ: Թանաքակալին վիզը ուղղահայեաց է, ոստրէն դէպի վար կը բացուի:

Իր շատ լավ պահպանուածութիւնը մեզի կը մղէ վերապահ գտնուելու Կարապետեանի կնիքներու աղիւսակի ժամանակագրութեան հանդէպ: Արդարեւ, Կարապետեան թերեւս մեկնելով ի ձեռի ունեցած ԻՇԽԱՆ կնիքին մաշուածութենէն, զայն նկատած է 1794ի արտադրութիւն, առանց յաւելնելու բացատրութեան: Սակայն, այս հաւաքածոյին մէջ եղած այս տիւրիթին կնիքին մաքրութիւնը, եւ ընդհանրապէս տիւրիթին շատ լավ պահպանուածութիւնը մեզի չեն մղեր զայն 1790ականներու արտադրութիւն նկատել: Հաւանաբար ան կրնայ աւելի ուշ շրջանի գործ ըլլալ³⁹:

- 34 Ունի երկու կնիք, մօտ՝ 10աին, եւ նման՝ այս հաւաքածոյի թիւ 13 կնիքին, հետեւաբար ան 10(1)ն է: Ունի խաչ: Միայն նեղ եւ թեք նիստերը նախշուած են: Թանաքակալին վիզը ուղղահայեաց չէ: Վիզը եւ նիստն ու անկիւնային երեսները նախշուած են: Թանաքակալին յատակը չկայ: Ոստրէն դէպի վեր կը բացուի:
- 35 Ունի մէկ կնիք: Այս կնիքին չենք հանդիպիր Կարապետեանի աղիւսակին մէջ: Այս կնիքը նոյնպէս ՆՈՐԱՅԱՅՏ է: Ան նման է ներկայ ցուցակի թիւ 42ի կնիքին: Անոր տուած ենք 12(1) թիւը: Խաչ ունի: Միայն նեղ եւ թեք նիստերը նախշուած են: Նեղ երկնահայեաց նիստին գլխազիր գրուած է «ԿԻՒԼ ԱԼԸԵԱՆ ՍՈՂՈՍՈՆ» եւ արաբատառ 1291 թուականը, որ կը համապատասխանէ 1874ին: Թանաքակալին վիզը ուղղահայեաց է, միայն գօտին եւ անկիւնային երեսները նախշուած են: Ոստրէն դէպի վար կը բացուի:
- 36 Ունի երկու նոյնանման կնիք, մօտ՝ 13աին: Կնիքը փակագիր ՍԱՐԳԻՍ եւ հայ. 81 թուականն ունի: Բաւական մաշած է: Նեղ եւ թեք նիստերը նախշուած են: Լայն, մեզի նայող նիստին գրուած է «ՅԻՇԱՍԱԿ ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ՎԱՐԺԱՊԵՏ ՎԱՀԱՆ Է՛Ֆ. ՔԻՒՐՔՈՒՄԵՆԻՆ Այնթապ 1886», որ սակայն կը կարծուի յետագայի փորագրութիւն ըլլալ, քանի որ այս հաւաքածոյի թիւ 36, 37 եւ 38 տիւրիթները ունին արձանագրութեան նոյն ձեւագիրը⁴⁰: Թանաքակալին վիզը ուղղահայեաց չէ: Վիզը եւ նիստն ու անկիւնային երեսները նախշուած են: Ոստրէն դէպի վեր կը բացուի:
- 37 Ունի մէկ կնիք, նման՝ 13աին: Կնիքը փակագիր ՍԱՐԳԻՍ եւ հայ. 81 թուականն ունի: Կնիքին թուականը հազիւ կ'երեւի: Նման է այս ցանկի թիւ 38 տիւրիթին: Ունի թաղաձեւ խաչ մը: Միայն թեք նիստերը նախշուած են: Թանաքակալի կողմի լայն նիստին, տերեւներու ձեւով նախշերով ցանկապատուած ուղղանկիւն տուփի մը մէջ, որ կ'երկարի խուփէն մինչեւ թանաքակալ, փորագրուած է. «ի յիշատակ Պետրոս Դուրեանին/Սկիւտարի Սոխակին/1906/Ռ. Սեւակ»: Հակառակ կողմին, խուփէն մինչեւ թագը երկարող թեք քառանկիւն նախշերով ցանկապատուած ուղղանկիւն տուփի մը մէջ կը կարդանք. «Ինձի կրտսէն ինչո՞ւ լուռ ես/ն՞վ, միթէ բառ կամ խօսք ունի/արշալոյսը որ կը բռնկի: Պ.Դ.»⁴¹: Թանաքակալը դէպի վար փակցուած է, որ մեզի ենթադրել կու տայ որ վրայի գրութիւնը գործին ժամանակակից չէ: Թանաքակալին վիզը ուղղահայեաց է: Նախշուած են վիզն ու անկիւնային երեսները: Ոստրէն դէպի վար կը բացուի:
- 38 Ունի երկու նոյնանման կնիք՝ ի տարբերութիւն նոյն արհեստանոցէն արտադրուած այլ տիւրիթի մը որ ունի մէկ կնիք: Ասկէ՝ թերեւս կարելի է հետեւցնել որ հաստատութիւններէն գէթ ոմանք մէկ կամ երկու անգամ կը կնիքէին իրենց արտադրած գրչակալին վրայ: Կնիքը նման է 13աին: Կնիքը փակագիր ՍԱՐԳԻՍ եւ հայ. 81 թուականն ունի: Նման է այս ցուցակի թիւ 37ի տիւրիթին, ուրկէ կրնանք աւելի վստահութեամբ պնդել թէ Կարապետեան կնիքին թուականը՝ 81, սխալ տեղ դրած է. 8ը պէտք է ըլլայ կնիքին վարի ձախ անկիւնը, իսկ 1ը՝ աջ անկիւնը: Վերամշակուած այս կնիքին տուած ենք 13թ թիւը: Ունի թաղաձեւ խաչ: Նախշուած են միայն նեղ եւ թեք նիստերը: Երկնահայեաց նեղ նիստին փորագրուած է արաբատառ «Ալլօ»: Թանաքակալի կողմի լայն նիստին, ուղղանկիւն տուփի մը մէջ, որ կ'երկարի խուփէն մինչեւ թանաքակալ, փորագրուած է. «Մեր սիրելի

ուսուցիչ քանաստեղծ/Գանիել Վարուժանին/Ա.Գ.եւ Ե.Ն.Էն/Սեբաստիա 1910»:
Հակառակ կողմի լայն նիստի ամբողջ երկայնքին, ուղղանկիւն տուփի մը մէջ կը կարդանք. «Եղեգնիա գրչով Երզնէի փառքեր/Քեզի ընծա՛յ, իմ Հայերնիք/Գ.Վ.»:
Այս գրութեան սկիզբը փորագրուած է Արարատ լեռը, իսկ վերջաւորութեան՝ ծաղիկ մը: Թանաքակալը դէպի վեր փակցուած է: Թանաքակալին վրայը ուղղահայեաց է, նախորդ տիւիթի թանաքակալին պէս:

- 39 **Կնիք չունի:** *Տիւիթը կը կրէ Անթիլիասի Թանգարանի թիւ 578 ցուցանմուշի համարը*⁴², *իսկ իր կողքին, անջատ բացատրագիրին վրայ կը կարդանք՝ «Գրչատուփ, 1892»:* *Թագին ունի ոչ-ծակոտկէն խաչածեւ կտոր մը, իսկ խուփին՝ գնդիկ:* *Լայն նիստերուն բուսական նախշեր կան:* *Թեք նիստերը նախշուած են:* *Երկնահայեաց նեղ նիստին գլխագիր կը կարդանք. «ԳԷՈՐԳ» եւ արաբատառ «1277» տարեթիւը, որ կը համապատասխանէ 1861-62ին, հետեւաբար այնտեղ գրուած ձեռագիր բացատրութիւնը վրիպանք մըն է:* *Թանաքակալին վրայը ուղղահայեաց է:* *Վրդերը եւ թեք անկիւնները նախշուած են:* *Լաւ պահպանուած է:* *Ոստրէն դէպի վար կը բացուի:*
- 40 **Կնիք չունի:** *Տիւիթը կը կրէ Անթիլիասի Թանգարանի թիւ 584 ցուցանմուշի համարը, իսկ իր կողքին կը կարդանք՝ «Գրչատուփ, 1911 նուէր Վարդան Արապանլեանի, Պէյրութ, 1997»*⁴³: *Միայն թեք նիստերը նախշուած են:* *Նեղ երկնահայեաց նիստին գլխագիր փորագրուած է.* «1908 ԱՎՏԻՍ ԱՐԱՊԱՆԼԵԱՆ»:
Ոստրէն չկայ:
- 41 **Կնիք չունի:** *Տիւիթը կը կրէ Անթիլիասի Թանգարանի թիւ 593 ցուցանմուշի համարը*⁴⁴: *Այս տիւիթը նախորդէն աւելի մաշած է:* *Միայն թեք նիստերը նախշուած են:* *Թագին վրայ խաչածեւ կտորին փոխարէն ծակ գնդիկ մը գետեղուած է:* *Երկնահայեաց նեղ նիստին կը կարդանք գլխագիր. «ԱՎԻ ԲԱՐԻ ՎԱՅԵԼՈՒՄՆ ԵՐԵՄԻԱ ԴՊՐԻՆ ԳԱՆՁԱԿԵՑԻՈՅ ԳՈ(Ի)ԻԼԹԱՂԷՆ»*⁴⁵ *ՋԹԻԻ ԱԲԱԶԱՆԻ 1805»:* *Հետաքրքրական է նեղ նիստի յատակի գլխագիր փորագրութիւնը. «ԾԱՂԿԱԳՐԵԱԼ/ ՅԱԿՈԲՈՍԻ/ ԱԿՆԱԳԻՐ ՈՐԴԻՈՅ ՊՈՂՈՍԻ ՈՐ Ի ԿԱՐԻՆ ՅԱՏՈԿ ...շուրջ 9 անընթ. տառ եւ թուական՝ 1875»:* *Աննախագէտ է ծաղկողին՝ գալմբեարին անուան նշումը:*
Թանաքակալի կողմի լայն նիստին վրայ, 5 ուղղանկիւն տուփերու մէջ կան գրութիւններ.-

Ա. Տուփ	<u>ԹԻՒՆ ԿԵՆԱՅ</u>	
	<u>ԹԱԳԱԻՈՐԻՆ</u>	
	ԹՈՅ	909
	ԹՈՅ	909
		1818
Բ. Տուփ	ՅԱՐԻՅԷ ԱԶԳ	9999
	ԱԶԳԻ ՎԵՐԱՅ	1818
	ԹՂՋԲ	8181
Գ. Տուփ	<u>1 ԳԱԶԱՆ</u>	411
	<u>2 ԳԱԶԱՆ</u>	411
	<u>3 ԳԱԶԱՆ</u>	411
	ՀԱԿԱՃԱՌ	1233
Դ. Տուփ	<u>3 ԳԻՄ</u>	223
	<u>4 ԴԱՅ</u>	305
	5 ԵՁ	705
		1233

Ե.Տուփ	3 ԳԻՄ	223
	2 ԲԵՆ	407
	1 ՅԱՅԲ	603
		1233

Թանաքակալի հակառակ կողմի լայն նիստին վրայ, 4 ուղղանկիւն տուփերու մէջ կան գրութիւններ եւ թիւեր.-

Ա. Տուփ	Խ	40	13	4
	Ա	1	1	1
	Չ	700	25	7
	Ի	20	11	2
	Ն	400	22	4
		1161	72	18
		72		
		1233		

Բ. Տուփ	<u>ՄԻՆՉ ԼՐԱՆԱՅ</u>	167
	<u>ԹԻՒՆ ԽԱՉԻՆ</u>	148
	<u>ԱՀԱՏԿՆՔՆ</u>	192
	<u>ԿՈՐԲՆՉԻՆ</u>	159
	ՅԱՅՏ 17:9:	666

Գ. Տուփ	<u>ՄԵԾ (ԳԱՀ)</u>	74
	<u>ԹԱԳԱ (ԿՈՍՏ)Թ 9</u>	
	<u>ԱՍՏԷ Ի ԱՍՏ</u>	666
	ՅԱՅՏ 13:18	
	<u>ԳԱՆ 9:2:ԵՒ ԱՅԼՆ:</u>	

Դ. Տուփ	<u>ԵՐԵՄԻԱ</u>	74
	<u>ԹԱԳԱԹԻՒ 68 ք</u>	9
	<u>ԻՍԱԿՍ 11:21:8:8</u>	666
	<u>ԵՍԱՅ 21:16:22:22</u>	
	ՅԱՅՏ 3:7: ԵՐԵ 25:11:29:10	

Մեր փորձը՝ վերծանելու թուականներն ու զանոնք համապատասխանեցնելու նոյն տողին վրայ գրուած հայերէն տառերուն, բռնագբօսիկ թուեցաւ: Այդուհանդերձ, արձանագրուած տողերը կը դրսեւորեն անձի մը/անձերու ազգային-կրօնական զգացումներն ու յոյսերը քրիստոնէութեան յաղթանակին, որ անուղղակիօրէն կ'արտացոլացնէ օտար լուծի տակ տառապող հայու սպասումները եւ տենչերը:

42 *Ունի մէկ կնիք, նման՝ 19-ին: Կնիքը փակագիր ՅԱԿՈԲ եւ արաբ․ 87 թուանշանն ունի: Թուականը պէտք է ըլլայ գրութեան վարի ոչ թէ կեդրոնը, այլ՝ ճախ եւ աջ կողմերը: Վերամշակուած կնիքին տուած ենք 19ք թիւը: Կնիքին վերի աջ անկիւնը ուրիշ նախշ մը: Խաչ ունի: Միայն թեք նիստերը, թագն ու խուփը նախշուած են: Նեղ, երկնահայեաց նիստին փորագրուած է «ԹԻՒԹՈՒՆԾԻՒ ՅԱԿՈԲԵԱՆ ԳԷՈՐԳ» 1876: Թանաքակալին վրը ուղղահայեաց է, նախշեր կան վիզին եւ անկիւնային երեսներուն: Ոտորէն դէպի վար կը բացուի:*

43 *Ունի երկու իրարմէ ՏԱՐԲԵՐ⁴⁶ կնիք: Մին հայերէն, իսկ միւսը՝ արաբատառ օսմաներէն: Սա միակ տիւրիթն է որ ունի երկու ՏԱՐԲԵՐ ԱՆՈՒԱՆԱԿԱՆ կնիք⁴⁷: Արաբերէն կնիքը 10(1)ին պէս է, իսկ հայերէնը՝ որոշ նմանութիւն ունի 12-ին: Ունի խաչ, ուր փորուած է սրտիկ մը: Թեք նիստերը եւ թագերը նախշուած են: Երկնահայեաց նեղ նիստին փորագրուած է «ԹԻՒՖԷՆԿԾԻ ԿԱՐԱՊԷՏԻ ՈՐԴԻ*

ԿԱՐԱՊԵՏ» 1865: Յատկանշական է որ թագ ու խուփի նախերը հապէս կը տարբերին թագ-խուփերու ընդհանրացած նախերէն թէ՛ իբրեւ աշխատանքի ոճ եւ թէ՛ իբրեւ գծանկար: Անոնք աւելի փորագրութիւն են քան թէ սրածայր դանակի գծային աշխատանք, ինչպէս նաեւ նախշուած են ամբողջութեամբ: Թանաքակալին վիզը ուղղահայեաց է: Վիզը նախշուած է. վերի եւ վարի պատուանդանները եւս: Ոստրէն եւ պատուանդանը չկան:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ-ԱՄՓՈՓՈՒՄ

- 1 Վերապահ ենք Կարապետեանի աղիւսակի թիւ 3 կնիքի ժամանակագրութեան: Կարապետեան թերեւս մեկնելով ի ձեռի ունեցած ԻՇՍԱՆ կնիքին մաշուածութենէն, գայն նկատած է “մօտաւորապէս” 1794ի արտադրութիւն, առանց յաւելեալ բացատրութեան⁴⁸: Սակայն, այս հաւաքածոյին թիւ 33 տիւիթին կնիքին մաքրութիւնը, եւ ընդհանրապէս տիւիթին շատ լաւ պահպանուածութիւնը մեզի չեն մղեր գայն 1790ականներու արտադրութիւն նկատել: Հաւանաբար ան աւելի ուշ շրջանի, յամենայնդէպս ոչ-1794ի գործ կը թուի, սակայն:
- 2 Վերապահ ենք Կարապետեանի թիւ 5 կնիքի փակագիրի ԿԱՐԱՊԵՏ ընթերցումին, նկատի առնելով կնիքին առաջին իսկ գիրը՝ Ն: Մենք աւելի հակամէտ ենք գայն ՆՈՒՊԱՐ կարդալու, բայց մեզ կը չփոթեցնէ երկու Աի գոյութիւնը:
- 3 Այս հաւաքածոյի թիւ 9 տիւիթի կնիքէն մեկնելով, կ’առաջարկենք ուղղել Կարապետեանի համապատասխան թիւ 15 կնիքին թուականը: Կարապետեանի այդ կնիքը կը կրէ հիմնաթիւ 1486 թուականը որ քրիստոնէական տակաւին չեղած թուական մըն է: Ան պէտք է ըլլայ 1286, որ կը համապատասխանէ 1869ին:
- 4 Այս հաւաքածոյի թիւ 14, 15, 16, 17 եւ 18 տիւիթներու կնիքէն մեկնելով կ’առաջարկենք Կարապետեանի համապատասխան թիւ 12 կնիքին 1281 թուականին դիրքը փոխել. 12ը տանիլ աջ, իսկ 81ը՝ ձախ անկիւն:
- 5 Այս հաւաքածոյի թիւ 20 տիւիթի կնիքէն մեկնելով կ’առաջարկենք Կարապետեանի համապատասխան թիւ 11 կնիքի 1281 թուականին դիրքը փոխել՝ 12ը տանիլ ձախ ծայր, իսկ 81ը՝ աջ ծայր: Կ’առաջարկենք նաեւ Կարապետեանի զծագրութեան կնիքին ‘կ’ը բարձրացնել:
- 6 Այս հաւաքածոյի թիւ 21, 22, 23, 36, 37 եւ 38 տիւիթներու կնիքներէն մեկնելով, կ’առաջարկենք Կարապետեանի համապատասխան թիւ 13 կնիքին 81 թուականին դիրքը փոխել՝ 8ը տանիլ ձախ, իսկ 1ը՝ աջ անկիւն, մինչ Կարապետեան զանոնք դրած է վարը կեդրոնը:
- 7 Այս հաւաքածոյի թիւ 24 տիւիթի կնիքէն մեկնելով կ’առաջարկենք բարեփոխել/ուղղել Կարապետեանի համապատասխան թիւ 17 կնիքը. Չն շատ աւելի յստակացնել եւ թուականը փոխել արաբատառ 86էն 87ի:
- 8 Այս հաւաքածոյի թիւ 29ի կնիքէն մեկնելով կ’առաջարկենք բարեփոխել Կարապետեանի թիւ 18 կնիքը եւ յԱԿՈՒՐ ՈՆ դնել առաջին տողի յԱի եւ երկրորդ տողի ԿԲի մէջտեղ:
- 9 Այս հաւաքածոյի թիւ 19 եւ 42 տիւիթին կնիքէն մեկնելով, կ’առաջարկենք Կարապետեանի համապատասխան թիւ 19 կնիքին արաբ. 87 թուականին

դիրքը փոխել՝ 8ը տանիլ ձախ, իսկ 7ը՝ աջ անկիւն, մինչ Կարապետեան զանոնք դրած է վարը, կեդրոնը:

- 10 Այս հաւաքածոյի թիւ 12 եւ 13 տիւրիթներու կնիքները նոյնն են, բայց կը տարբերին Կարապետեանի աղիւսակի թիւ 10 կնիքէն. այս երկու կնիքներուն մէջ կան զանազան յատկանշական տարբերութիւններ, որոնց հիմամբ կրնանք վստահօրէն ըսել որ գործ ունինք ՆՈՐ ԿՆԻՔԻ մը հետ՝ 10(2):
- 11 Այս հաւաքածոյի թիւ 5, 6, 7, եւ 8 տիւրիթներու կնիքները նոյնն են, բայց կը տարբերին Կարապետեանի աղիւսակի թիւ 16 կնիքէն. այս չորս կնիքներուն մէջ կան զանազան յատկանշական տարբերութիւններ, որոնց հիմամբ կրնանք յստակօրէն ըսել թէ գործ ունինք ուրիշ՝ ՆՈՐ ԿՆԻՔԻ մը հետ՝ 16(1):
- 12 Այս հաւաքածոյի թիւ 28 կնիքէն մեկնելով Թ՝ եւ Ն տառերուն միջեւ կ'աւելցնենք կրճատման նշանը:
- 13 Այս հաւաքածոյի թիւ 30 տիւրիթի կնիքը նորութիւն է: Այս տիւրիթը ունի երեք ՏԱՐԲԵՐ կնիքներ: Առաջին կնիքով, երկնահասեաց նեղ նիստին, արաբատառ տրուած է անունը՝ Ատուր՝ 20(1), երկրորդ կնիքով՝ ազգանունը՝ Պոչկէզէն 20(2), իսկ երրորդ կնիքով՝ վայրը՝ դարձեալ արաբատառ Այնթապ 20(3): Ասոնք ՆՈՐԱՅԱՅՏ ԿՆԻՔՆԵՐ են. առաջին երկուքը՝ վարպետին կամ արհեստանոցին կնիքը՝ արաբ. օսմ. Ատուր Պոչկէզէն, իսկ երրորդը՝ իր էութեամբ աննախընթաց՝ արհեստանոցին վայրը արձանագրող կնիք:
- 14 Այս հաւաքածոյի թիւ 35 տիւրիթի կնիքէն մեկնելով կրնանք ըսել թէ գործ ունինք նոր կնիքի մը հետ՝ 12(1):

*

Կնիքներու մասին եղած այս եզրայանգումներուն կողքին, այս հաւաքածոյի տուեալներէն կրնանք հետեւցնել, թէ.-

- Ա. Տիւրիթները ժամանակի ընթացքին իրենց կիրառական դերին կողքին, զգեցած են այլ դերեր եւս, ինչպէս՝ նուէրի, երախտագիտութեան դրսեւորումի, ընտանեկան յատկանշական իրողութեանց յիշատակումի, եւն.:
- Բ. Տիւրիթներու վրայ եղած գրութիւնները եղած են կարճաօտ:
- Գ. Ոմանք առնչուած են հաւատալիքներու, ինչպէս է պարագան այս հաւաքածոյի թիւ 41 տիւրիթին:
- Դ. Արաբատառ տարեթիւերը դրսեւորած են հիճրէթի թուականը, իսկ 'հայատառ' տարեթիւերը՝ քրիստոնէական:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Այս յօդուածի յառաջացման աշխատանքներուն էական նպաստ ունեցաւ Սասուն Սիմոնեանը իր խորհուրդներով, թելադրանքներով եւ նիւթի մեծ մասի հայթայթմամբ:

² Պերճ Կարապետեան, «Տիւրիթ Կոչուած Թափձու Գրչակալ Կաղամարներ Հայերէն Արձանագրութիւններով», Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԺԲ., Պէյքրութ 1992, էջ 81-106:

³ Մենք պիտի նախընտրենք տիւրիթը գրելուով՝ տիւրիթ:

⁴ Կարապետեան, էջ 91, 102:

⁵ Տեսակցութիւնն Ռուբէն Պարսումեանի հետ, Հալէպ 2 Ապրիլ 2010: Պարսումեան կը սերի այնթապցի պղնձագործներու սերունդէ, անձամբ աշխատած է այդ արհեստով եւ լաւագոյն դիտակներէն է այդ արհեստի մանրամասնութիւններու: Ան հայկական պղինձի հաւաքորդ է եւ ունի հարուստ հաւաքածոյ: Յօդուածին մէջ իրմէ կատարուած բոլոր վկայութիւնները արդիւնք են այս տեսակցութեան:

⁶ Ի տարբերութիւն հայ արուեստի այլ կալուածներու՝ մանրանկարչութեան, գեղանկարչութեան, գորգագործութեան, եւն. նուիրուած ուսումնասիրութեանց, հայկական կիրառական արուեստի կարգ մը բնագաւառներ չեն արժանացած համապատասխան հետեւողական համապարփակ ուսումնասիրութեանց. նորագոյն ուսումնասիրութիւններէն են հայ արծաթագործութեան նուիրուած Յովսէփ Թոքաթի (Osep Tokat, Armenian Master Silversmiths/Յովսէփ Թոքաթ, Հայ Արծաթագործ Վարպետներ, Տիգրան Մեծ Հրատ., Los Angeles, Van Publishing Inc., 2005), եւ Մարաշի Ասեղնագործութեան նուիրուած Հրազդան Թոքմաճեանի (Մարաշի Ասեղնագործութիւն, Հրատ. Մարաշի Հայրենակցական Միութեան Գերմանիկ Վասպուրական Մշակութային Միութեան, Հալէպ, Pawel Press, 2010) հատորները: Դժբախտաբար աւելի քիչ կը թուի ըլլալ հայ պղնձագործութեան նուիրուած ուսումնասիրութեանց շարքը: Կարապետեան ունի յօդուած մը հայ պղնձագործութեան մասին՝ «Հայկական Պղինձը 1600-1915թթ.» (Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. 2., Պէյրութ 1977-78, էջ 197-242), ուր տեղ գտած կնիքները գէթ մասամբ կ'առնչուին տիւրիթներու արհեստանոցներուն: Տիւրիթներու մասին նիւթը եւ ընդհանրապէս կիրառական պղնձագործութեան վերաբերեալ նիւթերէն քիչեր միայն կ'անցնին ցուցակազրուած-նկարագրութիւնի սահմանը: Նման գիրք մըն է Եւգինէ Մուշեղեանի հատորը՝ Յատկանշական Յուցակ Թանգարանային Ժողովածուներէ. Հայերէն Արձանագրութեամբ Առարկաներ (Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատ. Երեւան, 1964), որուն 76րդ էջին վրայ հեղինակը կ'արձանագրէ երկու տիւրիթ (թիւ 58 եւ 59) գրեթէ առանց նկարագրութեան եւ գանոնք կը թուագրէ համապատասխանաբար 1796 եւ 1873:

⁷ Կարապետեան, էջ 97:

⁸ Կարապետեան, էջ 88:

⁹ Անոնք կը հանդիսանան մեր ցանկի թիւ 1-33 տիւրիթները:

¹⁰ Անոնք կը հանդիսանան մեր ցանկի թիւ 39-41 տիւրիթները: Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Թանգարանի ցուցանմուշներուն քննութեան մեզի ցուցաբերած իր աջակցութեան համար շնորհակալութիւն կ'ուզենք յայտնել Թանգարանի պաշտօնէտէՆի Նայիրի Ղազարեանին: Շնորհակալութիւն՝ նաեւ այն անհատներուն, որոնք ազնուաբար մեր տրամադրութեան տակ դրին իրենց թանկագին նիւթերը: Դժբախտաբար Ձմմառու Թանգարանը չունի տիւրիթ, թէեւ ունի պղնձեայ, Հայր Վաղինակ Մելոյեանի գրասենեակին պատկանած, տարբեր տեսակի գրչաման մը իր կաղամարով:

¹¹ Անոնք կը հանդիսանան մեր ցանկի թիւ 36-38 տիւրիթները:

¹² Անոնք կը հանդիսանան մեր ցանկի թիւ 42-43 տիւրիթները: Սարգիս Կիրակոսեանի հետ մեր խօսակցութենէն պարզուեցաւ որ այդ զոյգ տիւրիթները պատկանած են անոր երէց ծնողքներուն, եւ թէ Կիրակոսեանի մօրենական մեծ հայրը՝ արհեստով պղնձագործ, Հալէպի մէջ կը պատրաստէր ոչ միայն տիւրիթներ, այլեւ պղնձեայ ծաղկաման, պանիրի կլոր կաղապարներ, ցպիկի վրայ գրուող շաքարէ անուշեղէններու կաղապարներ՝ ուղտի, սուլթանական աստղի, բագի, ծառի: Կիրակոսեան կը յայտնէ նաեւ որ իր մեծ հայրը կը շինէր պիտակ ճաքեցնող պղնձեայ աքցաններ եւս:

¹³ Ան կը հանդիսանայ մեր ցանկի թիւ 35 տիւրիթը:

¹⁴ Ան կը հանդիսանայ մեր ցանկի թիւ 34 տիւրիթը:

- ¹⁵ Մեր հաստատ համոզումն է սակայն, որ նշուածներէն բացի կան տակաւին տիւրիթներ, զանազան անհասոներու թէ հաւաքորդներու մօտ, որոնք նոյնպէս կ'արժէ մէկտեղել յօդուածի կամ յօդուածներու մէջ: Նոյնինքն Պարսումեան հաւաստեց որ ինք ունի մօտ 20 տիւրիթ:
- ¹⁶ Կարապետեան իր ներկայացուցած աղիւսակի կարգ մը կնիքներուն գծանկարներուն մէջ թոյլ տուած է վրիպումներ: Մեր կարծիքով, կնիքներուն վրիպանք/սխալանքները կրնան հետեւանք ըլլալ կա'մ թիւր վերծանումի, գծագրումի եւ կա'մ ալ այլապէս նոր կնիքներ նկատուել: Կայ այլ պարագայ մը եւս. բնականաբար կնիքները պիտի մաշէին, մանաւանդ՝ կնիքին բարակ մասերը աւելի ենթակայ են մաշումի կամ վնասուելու. դեռ աւելին՝ կնիքին տրուած որեւէ հարուած կրնար խեղաթիւրել դրոշմը: Ուստի, կարելի է ենթադրել որ կնիքներու թուականներ կրնան այնքան ալ ճիշդ չընթերցուիլ, մանաւանդ որ փոքր ըլլալով՝ անոնք աւելի ենթակայ են մաշելու/վնասուելու: Ասիկա կրնայ յառաջացնել թիւրընթերցումներ եւ սխալանքներ:
- ¹⁷ Կարապետեան, էջ 84:
- ¹⁸ Այս հաւաքածոյին մէջ կայ արծաթեայ միակ օրինակ մը՝ թիւ 32: Ըստ Պարսումեանի Պոլիսն է որ արտադրած է արծաթեայ տիւրիթներ:
- ¹⁹ Ասիկա երկաթ է:
- ²⁰ Ասոնք կարմիր պղինձ են:
- ²¹ Տիւրիթներուն նեղ ու լայն նիստերու չափերը տուած ենք յօդուածին վերջաւորութեան դրուած աղիւսակով՝ լայնք՝ ու՝ բարձրութիւն՝ սիւնակներուն տակ:
- ²² Կարապետեան, էջ 93:
- ²³ Այս հաւաքածոյին մէջ կայ միակ խաչ մը որ ոչ թէ ծակեր ունի, այլ սիրտ փորուած է անոր կեդրոնին (թիւ 43):
- ²⁴ Կարապետեան կու տայ 1 X 1 սմ. ծաւալը որ ճիշդ չէ:
- ²⁵ Կարապետեան կը նկարագրէ թանաքակալին տակ խփուած կնիքի միակ պարագայ մը, իր ցուցակին թիւ 4 տիւրիթը, էջ 98: Ներկայ հաւաքածոյին կնիքներէն թիւ 4, 5, 6, 8, 10, 12, 13, 20, 21, 24, 25, 27, 28, 36 եւ 38 տիւրիթները ունին երկու նոյնանման կնիքներ, իսկ թիւ 30 եւ 43ը ունին երկու տարբեր կնիքներ:
- ²⁶ Այս հաւաքածոյին թիւ 14, 26 եւ 33 տիւրիթները կնքուած են տարբեր ուղղութեամբ:
- ²⁷ Ոչ-հայտառ, բայց հայկական ինքնուրուիքեամբ այս կնիքները մաս կը կազմեն աւելի ընդհանրական երեւոյթի մը, որ կ'ընդգրկէ ի միջի այլոց հայտառ թրքերէնը: Այս երեւոյթը պէտք չէ բացատրել միայն լեզուի գիտութեան կամ հայածանք-ճնշումներու երեւոյթով, այլ թերեւս նաեւ շուկայական համարկումի նկատառումներով եւս:
- ²⁸ Կարապետեանի աղիւսակը չ'ընդգրկեր նման թուականով կնիք մը, հակառակ անոր որ ան կը նկարագրէ զայն (էջ 96):
- ²⁹ Կարապետեան, էջ 94:
- ³⁰ Մենք կը նախընտրենք գործածել միայն թանաքակալ եզրը:
- ³¹ Տե'ս՝ թիւ 41 տիւրիթը:
- ³² Նոյնինքն Սասուն Սիմոնեանի հաւաքածոն կը հաշուէ շուրջ 70 այլ տիւրիթներ, որոնք կնքուած չեն եւ արձանագրութիւն չունին բայց հաւաստի է անոնց հայկական արտադրութիւն ըլլալը: Սիմոնեանի հաւաքածոյին մէջ կը հանդիպինք նաեւ տիւրիթներու՝ ոչ-հայկական կնիքներով:
- ³³ Ըստ այդ աղիւսակին, թիւերու կողքին դրուած 'ա'երը կը ներկայացնեն Կարապետեանի աղիւսակային բնօրինակները, 'բ'երը կը ներկայացնեն բնօրինակներու բարեփոխուած/ուղղուած տարբերակները: Իսկ փակագիծերու մէջ դրուած թուանշանները կը մատնանշեն բնօրինակ դրոշմի ծիրին մէջ "նոր" կնիք մը:
- ³⁴ Ասիկա կրնայ անիմաստ բառ մը ըլլալ քանի գրութիւնը կեղծ է եւ հաւանաբար փորագրիչը փորձած է չինի նմանցնել առանց իմաստակիր բառ մը գոյացնելու ճիգին:
- ³⁵ Տե'ս՝ այս յօդուածին մէջ այլուր:

- ³⁶ Ըստ երեւոյթին ան անախապէս պատկանած է Պարսումեանին:
- ³⁷ Կարապետեան, էջ 97:
- ³⁸ Կարապետեան էջ 94: Կարապետեանի «Հայկական Պղինձը. 1600-1915թթ», յօդուածին մէջ, (Հայկազեան Հայագիտական Հանդէս, Զ. Հար., 1977-78, էջ 225), կը յիշուին երեք Ատուրներ՝ հիմրէթի 1280, 1282 եւ 1297 թուականներով: Կարապետեանի «Տիվիթ Կոչուած Թափծու» յօդուածին մէջ եւս կը հանդիպինք երեք Ատուրներու եւ անոնց կնիքներուն:
- ³⁹ Տառատեսակի հնատճուժիւնը, սակայն կը խօսի մեր այս կարծիքին դէմ:
- ⁴⁰ Տեսակցութիւն Յարութիւն Թորոսեանի հետ, Մայիս 2010:
- ⁴¹ Դուրեանի ծանօթ այս բանաստեղծութիւնը ոչ-ճշգրտութեամբ փորագրուած է հոս:
- ⁴² Դիւանական Հարցաթերթիկին վրայ նշուած է. «Ստացման թուական 3/2/1995 Յուսիկ սրբազանէն թանգարանին, ձեռամբ ՆՍՕՏՏ Գարեգին Բ. Կաթողիկոսին»:
- ⁴³ Դիւանական Հարցաթերթիկին վրայ նշուած է սակայն 1908 տարեթիւը: Նոյն Հարցաթերթիկէն կը պարզուի որ նուիրատուութիւնը կատարուած է 2/9/1998ին:
- ⁴⁴ Դիւանական Հարցաթերթիկին վրայ նշուած է նուիրատուին անունը՝ Տիվ. Սաթեհիկ Ասրբեան:
- ⁴⁵ Գուլթաղ/Գիւլթաղ/Գիւլթաղ/Կիւլթաղը կը գտնուէր Լեւոնային կամ Միջին Արցախի պատմութեան ընթացքին Զրաբերդ/Ջուանչիւր/Թալիշ/Կիւլթատան/Մեծ Կողմանք/Մեծկուանք անուններով ճանչցուած գաւառին մէջ, ներկայիս՝ Լեւոնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Վանք գիւղէն հիւսիս արեւելք: Գիւղը եղած է ձըւ-Մելիք Ալլահվերդիի նստավայրը: Գիւղին մասին յիշատակութիւններ կան առնուազն 1790ականներէն (Մակար Եպս. Բարխուդարեանց, Արցախ, Բագու, Տպ. Արօր, 1895, էջ 24, 214. նաեւ՝ Թ. Յակոբեան, Ստեփան Մելիք-Բախչեան, Յովհաննէս Բարսեղեան, Հայաստանի Եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Հար. 1, Ա-Գ, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1986, էջ 902-903):
- ⁴⁶ Ի տարբերութիւն այս ցանկի թիւ 30 աիւրթին, որ ունի տարբեր բնոյթի երկու կնիք՝ անուան եւ տեղի:
- ⁴⁷ Ոչ Կարապետեանի յօդուածին մէջ ոչ ալ այս հաւաքածոյին մէջ մենք կը հանդիպինք նման պարագայի մը, ուր նոյն աիւրթին վրայ զարնուած ըլլան երկու տարբեր անուանական կնիքները::
- ⁴⁸ Կարապետեան, էջ 98:

THE ARMENIAN *DIVIDS*: FURTHER INFORMATION AND NOVELTIES
(Summary)

ANTRANIG DAKESSIAN

The study continues the survey described in an article by the late Berj Garabedian and published in the 12th volume of the *Haigazian Armenological Review* (1992).

The current article describes 43 new *divids*, their decorative engravings, their Armenian inscriptions, the different seals of the master moulders and workers in bronze, copper and silver, and the question of dates and names in monogramic forms.

The study adds six new stamps to the already circulated 19 stamps of various *divid* workshops, and a single stamp of the location of the workshop, suggests corrections to the designs of ten stamps published in Garabedian's article, and expresses reservation regarding the date of Garabedian's 3rd stamp and the deciphering of Garabedian's 5th stamp.

The article offers two tables that reveal the height, length, weight, and other details of the 43 *divids* described here. Furthermore, it offers the pictorial and updated version of all the stamps.